

Դատական Գործ N: ՎԴ/0807/05/11

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	15-03-2011
Հայցվոր/դիմող	
Անուն	Սիրուշ
Ազգանուն	Միքայելյան
Հասցե	ք.Աբովյան,3-րդ միկրոշրջ,15շ բն 55
Պատասխանող	
Անուն:	ՀՀ Կոտայքի մարզպետարան
Հասցե:	ք
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	01.02.2007թ թիվ 10 և 26.01.2010թ թիվ 5 կարգադրությունները անվավեր ճանաչելու և նոր պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	1.2
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	15-03-2011
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	8000
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	15-03-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Կարեն Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	22-03-2011
Որոշման հիմքը	
Հոդված	ՀՀ վարչ. դատ. օր-ի 76,79 հոդվածներ
Որոշման բովանդակություն:	
Ամսաթիվ:	22-03-2011
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	8000
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-03-2011
Ելքի համարը:	Ե-19376
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	
Ամսաթիվ:	22-04-2011
Էջերի քանակը:	21
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-04-2011
Էջերի քանակը:	21
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Վարչական վերաքննիչ
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	ԴԴԳ-Ե-25550/11
Ամսաթիվ:	27-04-2011
Ամսաթիվ:	20-06-2011
Ամսաթիվ:	24-06-2011
Էջերի քանակը:	47
Գործին կից նյութերը:	
21-06-2011թ գործը մակագրվել է դատավոր Կ. Ավետիսյանին ծանոթնալ մակագրությամբ, 24-06-2011թ գործը հանձնվել է գրասենյակ 47 թերթից	
Այլ նշումներ:	
Դատական Գործ N: ՎԴ/0807/05/11	
Ամսաթիվ:	13-04-2011
Բողոք բերող անձը	

Անուն	Սիրանուշ
Ազգանուն	Միքայելյան
Հասցե	ք.Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 152.,55բն.
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Պետական տուրք:	
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 22.03.2011թ. հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ. Սիրանուշ Միքայելյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի՝ 01.02.2007 թվականի թիվ 10 և 26.01.2010 թվականի թիվ 5 կարգադրություններն անվավեր ճանաչելու և նոր պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին
Գործի համարը:	ՎԴ/0807/05/11
Ամսաթիվ:	02-05-2011
Վիճակագրական տողի համարը:	1.2
Գործի համարը:	ՎԴ/0807/05/11
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	21
Գործը ստացվել է:	Վարչական
Ամսաթիվ:	02-05-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Հովսեփ Բեդկյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Երբ:	03-05-2011
Որոշումը ուղարկվել է կողմերին:	03-05-2011
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	03-05-2011
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	10-05-2011
Այլ նշումներ:	

Ղատական ակտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Գործ թիվ ՎԴ/0807/05/11

2011 թվականի մայիսի 10-ին ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ ղատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ ղատարան)՝ ղատավոր Հ. Բեդկյան, քննելով ըստ հայցի Սիրանուշ Միքայելյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի՝ 01.02.2007 թվականի թիվ 10 և 26.01.2010 թվականի թիվ 5 կարգադրություններն անվավեր ճանաչելու և նոր պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին գործով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչական ղատարանի թիվ ՎԴ/0807/05/11 որոշման դեմ Սիրանուշ Միքայելյանի բերած վերաքննիչ բողոքը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի ղատավարական նախապատմությունը

Սիրանուշ Միքայելյանը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական ղատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի՝ 01.02.2007 թվականի թիվ 10 և 26.01.2010 թվականի թիվ 5 կարգադրություններն անվավեր ճանաչելու և նոր պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
Հայաստանի Հանրապետության վարչական ղատարանը 2011 թվականի մարտի 22-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է, որպես հիմնավորում նշելով, որ. «... Տվյալ դեպքում հայցապահանջը վերաբերում է Սիրուշ Միքայելյանին «Արուսյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն նշանակելու վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 01-ի թիվ 10 և Սիրուշ Միքայելյանին նույն կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից ազատելու վերաբերյալ 2010 թվականի հունվարի 26-ի թիվ 5 ՀՀ Կոտայքի մարզի մարզպետի կարգադրություններն անվավեր ճանաչելուն և նոր աշխատանքային պայմանագիր կնքելուն պարտավորեցնելուն: Սա նշանակում է՝ որ սույն վեճը վերաբերում է աշխատանքային իրավահարաբերություններին՝ որոնք ծագել են ՀՀ Կոտայքի մարզի մարզպետի՝ որպես գործատուի և Սիրանուշ Միքայելյանի՝ որպես աշխատողի միջև:...»:
Սիրանուշ Միքայելյանը 2011 թվականի ապրիլի 13-ին բողոք է բերել նշված որոշման դեմ: Գործը Վերաքննիչ ղատարանում ստացվել է 2011 թվականի մայիսի 02-ին:
Վերաքննիչ ղատարանի 2011 թվականի մայիսի 03-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Համաձայն ներկայացված բողոքի, 15.03.2011 թվականին հայց է ներկայացրել ՀՀ վարչական ղատարան ընդդեմ Կոտայքի մարզպետարանի՝ ՀՀ Կոտայքի մարզպետի 01.02.2007 թվականի թիվ 10 և 26.01.2010 թվականի թիվ 5 կարգադրություններն անվավեր ճանաչելու և նոր պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին: ՀՀ վարչական ղատարանը 22.03.2011 թվականի թիվ ՎԴ/0807/05/11 որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի« գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը» ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:

Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը» այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը« որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող

միավորումների« այդ թվում՝ արհեստակցական միությունների« գործունեությունը կասեցնելու կամ

դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը« որոնք բխում են հանրային

իրավահարաբերություններից:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է« որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը« պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը« ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

Որպես վերաքննիչ բողոքի հիմքեր և հիմնավորումներ նշել է.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը» այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը« որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող

միավորումների« այդ թվում՝ արհեստակցական միությունների« գործունեությունը կասեցնելու կամ

դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը« որոնք բխում են հանրային

իրավահարաբերություններից:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական ուսումնական հաստատությունը հիմնարկ է« որը սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով« իր գործունեության նպատակին« իր հիմնադրի հաստատած կանոնադրության եւ իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան տիրապետում» օգտագործում ու տնօրինում է այդ գույքը: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի: Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է« որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է պետական

կրթական քաղաքականության իրականացումը: Իսկ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն մարզպետն ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը՝ վերահսկում է նախադպրոցական եւ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը՝ ապահովում է կրթական եւ դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ համակարգում եւ վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը՝ ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում՝ ապահովում է ուսումնական հաստատությունների շենքերի կառուցումը՝ շահագործումը եւ պահպանումը՝ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ: Օրենքի 40-րդ հոդվածով սահմանված են ուսումնական հաստատության իրավասությունները և կառավարումը՝ որի 5-րդ կետում սահմանված է՝ « որ ուսումնական հաստատությունը կառավարում է տնօրենը՝ ռեկտորը (պետը)» որը նշանակվում (ընտրվում) եւ ազատվում է ուսումնական հաստատության կանոնադրության համաձայն: Պետական ուսումնական հաստատության տնօրենը՝ ռեկտորը (պետը) չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտամանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից: Ուսումնական հաստատության կառավարման բարձրագույն եւ գործադիր մարմինների միջեւ լիազորությունները սահմանազատվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունը հռչակում եւ երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի եւ հասարակության անվտանգության եւ կայուն զարգացման ապահովման՝ հայ ինքնության պահպանման կարեւոր երաշխիք: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է՝ « որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած՝ հայրենասիրության՝ պետականության եւ մարդասիրության ոգով դաստիարակված եւ մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ծեւավորումն է: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը՝ որը ընտրվում (նշանակվում) եւ ազատվում է (նրա լիազորությունները դադարում են) օրենսդրությամբ եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով: Վերոգրյալից հետևում է՝ « որ տնօրենը կառավարության կողմից սահմանված կարգով ընտրված և պետական կրթական քաղաքականության իրականացնող մարմին է: Այսինքն դպրոցի տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են կառավարության կողմից սահմանված կարգով՝ իսկ դպրոցի տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու պարտականությունը դրված է կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի վրա: Ուստի տվյալ հարաբերությունը ոչ թե մասնավոր է՝ այլ հանրային:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել է բեկանել ՀՀ վարչական դատարանի 22.03.2011 թվականի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին թիվ ՎԴ/0807/05/11 որոշումը:

3. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «վարչական դատարանն ըստ էության քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը» և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն. վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե «հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության»:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ 1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»: Նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն. իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի

առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»:

Նշված իրավանորմերի պահանջների հաշվառմամբ վարչական դատարանը գտնում է, որ «Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ինքնուրույն իրավաբանական անձ է: Հետևաբար ինքնուրույն իրավաբանական անձի և իր աշխատողի միջև ծագած աշխատանքային բնույթի իրավահարաբերությունները չեն հանդիսանում հանրային բնույթի իրավահարաբերություններ:

Ղատարանի նման իրավական դիրքորոշումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի կանոնակարգումով: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն.

«Աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ»:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ. «1. Հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը եւ համայնքային ծառայությունը, ինչպես նաեւ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

2. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքականություն իրականացնում են քաղաքական, հայեցողական ու քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրանց վերապահված լիազորությունների շրջանակներում, քաղաքական որոշումների ընդունմամբ եւ դրանց կատարման համակարգմամբ:

3. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառույթների իրականացմանը:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաեւ դիվանագիտական եւ օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

4. Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառույթների իրականացմանը:

5. Քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու

	<p>աշխատողների միջոցով:»: Հանրային ծառայության բնագավառում ևս ծագում են աշխատանքային իրավահարաբերություններ, սակայն դրանք ունեն առաձեռնահատկություններ և հենց դրանով է պայմանավորված, որ բազում աշխատանքային վեճերից միայն հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերն են, որ ընդդատյա են վարչական դատարանին: Վերոհիշյալ իրավանորմերի մեկնաբանմամբ դատարանը գտնում է, որ «Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը չի հանդիսանում վարչական մարմին, իսկ դպրոցի տնօրենի պաշտոնը չի հանդիսանում հանրային ծառայության պաշտոն, Սիրանուշ Միքայելյանի վերաբերյալ հրամաններն իրենցից չեն ներկայացնում վարչական ակտեր: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն հայցվորն իրավունք չունի դիմելու վարչական դատարան: Սիրանուշ Միքայելյանի և «Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև առաջացող հարաբերությունները սովորական աշխատանքային հարաբերություններ են, որոնք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով: Նշվածով պայմանավորված Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը գտնում է, որ սույն գործի քննությունը ենթակա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքում նշված հիմքերը և հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի մարտի 22-ի հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացնելու համար: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 2-րդ մասով և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը</p> <p>Ո Ր Ո Շ Ե Ց</p> <p>Սիրանուշ Միքայելյանի բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» թիվ ՎԴՊ0807/05/11 որոշումը թողնելով օրինական ուժի մեջ: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ԲԵՂԵՎՅԱՆ</p>
<p>Դատական ակտի ամսաթիվը:</p>	<p>10-05-2011</p>
<p>Ակտով հօգուտ պետ. քյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):</p>	<p>0</p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>15-06-2011</p>
<p>Ամսաթիվ:</p>	<p>15-06-2011</p>
<p>Էջերի քանակ:</p>	<p>44</p>

Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	15-06-2011
Ուր:	Վարչական
Գրության համարը:	3069/11
Այլ նշումներ:	